ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոսի 2022 թվականի N 1238 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-Ի N 397-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 9-ի N 351-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 397-Ն որոշման հավելվածի 394-րդ կետի «ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ» սյունակը «ԳՈՐԾԵՐԻ» բառից հետո լրացնել «, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅՆ ԳՈՐԾԵՐԻ, ՈՐՈՆՑ ՄԱՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՄ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ ԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ: ՆՇՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ 5 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՎԵՐՁՆԱ-ԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՄ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏ ԿԱՅԱՑՎԵԼՈՒՑ, ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱ-ԽՈՒԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՎԱՐՏՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ